ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները ՀՀ-ում» թեմայով՝ Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտի տնտեսագիտության և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Ներկայումս աղքատության հաղթահարումը արդիական սոցիալ-տնտեսական խնդիր է համարվում, քանի որ այն, թերևս, իր սրությամբ կամ ընդգծվածության տարբեր աստիճաններով դրսևորվում է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Աղքատության առկայությունն իր ազդեցությունն է թողնում հասարակական տարբեր շերտերի համերաշխության, սոցիալական հավասարակշռման, սպառման վարքագծային դրսևորումների վրա: Աղքատ բնակչության առկայության հետևանքով որակյալ մարդկային կապիտալի ձևավորման գործընթացը դանդաղում է, իսկ աղքատ ապրելու հարմարվողականության մշակույթը խոչընդոտում է հասարակության լիարժեք զարգացումը: Եվ, ի վերջո, երկրում աղքատ ազգաբնակչության առկայությունը տնտեսական բեռ է հանդիսանում հանրության համար, քանի որ պետությունը ստիպված բազմաբնույթ սոցիալական միջոցառումներ է իրականացնում և հսկայածավալ ռեսուրսներ ծախսում աղքատության կրճատման կամ դրա սրացումը կանխարգելելու ուղղությամբ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է հետազոտել և գիտական ուսումնասիրությունների արդյունքում հիմնավոր մոտեցումներ ներկայացնել ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիների գծով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ ատենախոսության խնդիրներն են.

- ուսումնասիրել աղքատության սոցիալ-տնտեսական բնույթը և դիտարկել աղքատության հաղթահարման գործընթացի նշանակությունը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի տեսանկյունից,
- վերլուծել աղքատության հաղթահարման միջազգային առաջավոր փորձը և կատարել առաջարկություններ այն Հայաստանի Հանրապետությում տեղայնացման ուղղություններով,
- շահառուների գործողությունների ներդաշանակեցման հենքով ներկայացնել աղքատության հաղթահարմանն ուղղված էկոհամակարգ՝ հաշվի առնելով նրանում

ընդգրկված դերակատարների ռազմավարական գործողությունների ուղղությունները,

• մշակել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի բարելավման ուղիներ,

• հիմնավորել աղքատության հաղթահարմանն ուղղված առաջընթացի առանցքային ցուցիչների կիրառման անհրաժեշտությունը ռազմավարական որոշումներում,

• մշակել առաջընթացի առանցքային ցուցիչներով աղքատության հաղթահարման ռազմավարական որոշումների կառուցակարգ,

• մշակել երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը աղքատության սոցիալ-տնտեսական համակարգն է ՀՀ-ում, իսկ հետազոտության առարկան՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիների կիրառման հիմնախնդիրները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը և նորույթը

Հետազոտության գիտական նորույթը ամփոփվել է հետևյալ հիմնական դրույթներում.

• մշակվել է աղքատության հաղթահարման էկոհամակարգային մոտեցում՝ հիմնված հանրային համերաշխության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հենքով ռազմավարության մասնակցային իրականացման վրա, որով համակարգվում են երկրում աղքատության կրճատման բոլոր շահառուների կառավարչական գործառույթները,

• ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման համատեքստում վերհանվել են առաջընթացի առանցքային ցուցիչների բովանդակային և կառուցվածքային բնութագրիչներն ու մշակվել աղքատության հաղթահարման գործողությունների արդյունքների չափելիություն ոչ միայն հետահայաց մոտեցումներով, այլև տեսանելի ապագային միտված գործողությունների նպատակադրումներով,

• աղքատության հաղթահարման առաջընթացի առանցքային ցուցիչների շրջանակի մշակմամբ ներկայացվել է աղքատության կրճատման կառավարչական որոշումների ընդունման կառուցակարգ՝ աղքատության կրճատման առաջընթացի ռազմավարական նպատակադրումները համեմատելով փաստացի ձեռքբերումների հետ և բացահայտելով աղքատության կանխարգելման ուղիների ուժեղ և թույլ կողմերը,

• մշակվել է երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս, որը, ի տարբերություն աղքատությունը չափող միջազգային ինդեքսների, լրացուցիչ հնարավորություն է ստեղծում վերլուծելու աղքատության կրճատմանն ուղղված գործողությունների արդյունքները և իրականացնելու աղքատության հաղթահարման գործոնային վերլուծություն՝

շահառուներին տրամադրելով ռազմավարական որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

«Աղքատության արդի վիճակը դրսևորման պատճառահետեվանքային հիմքերը ՀՀ-ում» հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Գ. Բ. Բաղդասարյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ՀՀ -ում աղքատության արդի վիճակը ու դրսևորման պատճառահետևանքային հիմքերը, և աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղություններին նվիրված համալիր հետազոտություն է: Աշխատանքում ներկայացված են կիրառական առաջարկություններ որոնք ուղղված երկրում աղքատության կրճատման նպատակադրումների և դրանց իրականացման ռազմավարական գործառույթների բարելավմանը: Ատենախոսության շրջանակում մշակված գործիքակազմը, կատարված տեսամեթոդաբանական եզրակացությունները կիրառական տեսանկյունից իրատեսական են, ինչն էլ հետազոտությանը հաղորդում է թե' գիտական արժեք, թե' գործնական արդիականություն:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը շարադրված է 140 էջի վրա (առանց հավելվածների), բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից:

Աշխատանքի առաջին՝ **«Աղքատության հաղթահարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում հեղինակի կողմից ներկայացվել են աղքատության էությունը, դրա տնտեսագիտական բովանդակությունն ու սոցիալական բնույթը, ինչպես նաև աղքատության կառավարման հիմնական մոտեցումները: Աղքատությունը դիտարկվել է որպես բազմաչափ սոցիալ-տնտեսական հիմնախնդիր՝ պայմանավորված եկամուտների անհավասար բաշխմամբ, զբաղվածության սահմանափակումներով և ինստիտուցիոնալ գործոններով: Գլխում միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում հեղինակը վերլուծել է սոցիալական քաղաքականության տարբեր մոդելներ (աշխարհամասային, անգլոսաքսոնական, սկանդինավյան, հարավեվրոպական) և դրանց կիրառելիությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Աղքատության արդի վիճակը և դրսևորման պատճառահետևանքային հիմքերը ՀՀ-ում»** գլխում վերլուծության են ենթարկվել աղքատության հիմնական ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում, տարածքային տարբերությունները և դրա սոցիալ-տնտեսական դրսևորումները, ինչպես նաև գնահատվել են ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերը: Ուսումնասիրության են ենթարկվել նաև աղքատության միջազգային ինդեքսները: Միաժամանակ հիմնավորվել է, որ ՀՀ-ում աղքատության դրսևորման

պատճառահետևանքային միտումները բազմավեկտոր են և առաջացնում են բազմաչափ գնահատման անհրաժեշտություն:

Ատենախոսության երրորդ՝ **«Աղքատության հիմնախնդրի լուծման հիմնական ուղղությունները ՀՀ-ում»** գլխում հեղինակի կողմից ներկայացվել են աղքատության հաղթահարման ռազմավարական քաղաքականության ձևավորման հիմնարար ուղղությունները և գործիքակազմը: Մասնավորապես, քննարկվել են աղքատության հաղթահարման էկոհամակարգի ձևավորման կառուցակարգերը և կարևորվել «վերևից» ու «ներքևից» աղքատության կրճատմանն ուղղված առանցքային ցուցիչների վերլուծությունները, երբ բացահայտվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների ազդեցության դերակատարումները տվյալ ոլորտում:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները

1. Հեղինակի կողմից աշխատանքի 3.1 ենթագլխում առաջարկված աղքատության հաղթահարման էկոհամակարգի գիտական նշանանակությունը էականորեն կբարձրանար, եթե հեղինակը վերջինս համեմատեր սոցիալական աջակցության ծրագրերից՝ աստիճանական դուրսբերման քաղաքականության հետ (graduation policy) ու հստակ մատնանշեր տարբերությունները՝ կատարելով համեմատական վերլուծություն իր առաջարկածի և գոյություն ունեցող միջազգայնորեն ընդունված այդ քաղաքականության միջև:
2. Աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեր նախկինում ՀՀ-ի կտրվածքով, ինչպես նաև մի շարք մարզերի/համայնքների օրինակով հաշվարկված բազմաչափ աղքատության համաթիվը ու վերջիններիս արդյունքները վերլուծվեին և համեմատվեին 2.3-ում հեղինակի կողմից ներկայացված տնտեսաչափական գնահատման արդյունքների հետ, մասնավորապես հիմք ընդունելով՝ հետյալ աղբյուրները.

Grigoryan, A., & Khachatryan, K. (2021). *Multidimensional poverty in Armenia.* American University of Armenia, Center for Business and Economic Research. https://cbe.aua.am/wp-content/uploads/2021/11/Grigoryan_Khachatryan_Multidimensional-Poverty-in-Armenia-21.06.pd

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (CRRC-Armenia). (2023). *Բազմաչափ աղքատությունը Հայաստանում. Ազգային զեկույց.* Եվրոպական

Միություն https://epfarmenia.am/sites/default/files/Document/MPI-Report-CRRC-Armenia-Jan13-ARM.pdf

3. Ատենախոսության 103-րդ էջում հեղինակը նշել է, որ <<ԱԱՑ-ների կիրառումը աղքատության հաղթահարման ռազմավարական որոշումներում համարվում է արդարացված>>, սակայն լավ կլիներ տվյալ պնդումը ավելի հիմնավորված ներկայացնել՝ մասնավորապես հիմնավորված լիներ մի քանի հեղինակների եզրահանգումներով, ինչը ավելի արժեքավոր կդարձներ աշխատանքը:
4. Ատենախոսության մեջ օգտագործվել է «զբաղված աղքատ» եզրույթը (էջ 29, 31, 69, 110, 112-ում), սակայն աշխատանքում բացակայում է այդ եզրույթի գիտական սահմանումը միջազգային գրականության համատեքստում: էջ 69 -ում նշվում է, որ այն նոր եզրույթ է և հղում է արվում «Սահակյան. Մ, Կարապետյան. Լ, «Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում»» գրքին (101-րդ հղում):
5. Աշխատանքում տեղ են գտել որոշ տեխնիկական թերություններ. գրականության ցանկը ցանկալի է ներկայացնել այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, սակայն Գ. Բ. Բաղդասարյանի ատենախոսության մեջ հղումների համարները բացակայում են:

Եզրակացություն

Ատենախոս Գ. Բ. Բաղդասարյանը կատարել է արդիական, թեմային նվիրված, ծավալուն և գիտական տեսանկյունից հիմնավորված հետազոտություն, որը ներառում է տեսական, մեթոդաբանական և կիրառական բնույթի մոտեցումներ: Աշխատանքը կարելի է գնահատել որպես ինքնուրույն իրականացված գիտական հետազոտություն, որի շրջանակում ուսումնասիրվել և լուծումներ են առաջարկվել ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական արդիական մոտեցումների մշակման ու ներդրման հետ կապված մի շարք կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան և արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու ստացված գիտական արդյունքները: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու գիտական նորույթները ներկայացված և լուսաբանված են հեղինակի հրապարակած 7 գիտական հոդվածներում: Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել **«Աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները ՀՀ-ում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը *բավարարում է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտի տնտեսագիտության և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝*

Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի զբոսաշրջության
և սերվիսի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու Սվետլանա Արկադիի Դալլաքյան

Ա. Ս. Դալլաքյանի ստորագրությունը հաստատում եմ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
գիտական քարտուղար Վասմիկ Հովհաննեսի Փիլավջյան

«10» հունիս 2026թ.